№ 36 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 — 1895 — ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30 № 36

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 դրամ, կէս տարուանը 6 դրամ։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 բուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 բուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

# ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. բացի կիրակի և տօն օրերից։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱՑԻՒՆԴ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1896 ԹՒԻ

**Գ. ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ Գ. ՏԱՐԻ**

**ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ**

Կը հրատարակվի Թէհրանում նոյն ուղղութեամբ և նոյն ծրագրով «Շաւիղի» բաժանորդագին է Պարսկաստանի համար մէկ թուման. կէս տարուանը վ ց դրան։ Արտասահմանի համար 3 բուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 բուբլի կամ 5 ֆրանկ։

Ռուսաստանից դրամական ծրարները պիտի ուղարկուեն անպատճառ հետևեալ հասցէով։ Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Խնդրվում է ուշք դարձնել ճիշտ այս հասցէով և առանց մի բառ մոռանալու ուղարկել դրամները, այլապէս չեն ընդունվի։ Եւրոպայից ուղարկել պէտք է փոխանակագրով կամ թղթադրամով. Հասցէին Եւրոպայի համար Téhéran, Redaction «CHAVIGH». այդ հասցէին պիտի լինի նաև Ռուսաստանից խմբագրութեան ուղղված թղթակցութիւնները։

Խմբագրութիւնը ունի գործակալներ հետևեալ տեղերում։

Կովկասում.—Թիֆլիս՝ պ. Սպենդիարեան. «Մուրճի» խմբագրութեան մէջ պ. Յ. Յակոբեան. պ. Խ. Արզումանեան։ Բաթում.—պ.պ. Դ. Դրիգորեան, Ստեփան Քէօսէեան։ Բագու—Տպարան «Արօր». Որդիք Բ. Արզումանեանք։ Բալախանի.—պ. Բալասի Ա. Դարբիէլեան։ Կարս.—պ. Արէլ Ապրեսեան։ Շուշի.—պ. Թոմաս Մհերեան։ Սխալքալաք.—պ. Ջաւադ Տ. Դրիգորեան։ Օղեպա.—պ. Որդիք Բ. Արզումանեանք։ Եւրոպա. Ռուսչուք.—պ. Փ. Հաղլեան։ Պարսկաստանում.—Սալմաստ՝ պ. Յ. Ապրեսեան (Եղբայրք Ս. Արզումանեանք) Արդաբիլ՝ պ. Յակովբ Էլչիբէկեան։ Նոր-Ջուղայ՝ պ. Յովսէփ Հարսեղեան։ Բուշիր՝ Կ. Զէյթունեան։ Ռաշտ և Էնզէլի՝ պ. Ալէքսան Յովսէփեան։ Մարաղա՝ պ. Մելքոն Խալափեանց.

Գործակալ չեղած քաղաքներից բաժանորդագին կարելի է ուղարկել պարսկական նամակադրոշմներով։

Ապառիկ բաժանորդագրութիւն ոչ մի դէպքում չէ ընդունվում։

Պարսկաստանի համար հասցէն Redaction «CHAVIGH», Téhéran.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին հեռագիրները. Ատրպատականի առաջնորդական ընտրելի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ Մարաղայից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Լևոն Վ. Խոջայեանի վերջին նամակը.

### ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

Լոնդոն. Հոկտ. 4. Կառավարութիւնների Կ. Պոլսի դեսպանները բողոքեցին Բ. Դուռան՝ ոստիկանութեան զազանութիւնների մասին, դէպի հայ բանտարկեալները. նաև նրա մասին որ ոստիկանները սպանում էին վիրաւորուածներին։ Նրանք պահանջել են միջոցներ ձեռք առնել կարգ կանոնը վերահաստատելու համար։ Կ. Պոլսի հայոց եկեղեցիները լցել են կանանցով և երեխաներով, որոնք մերժում են դուրս գալու, վախենալով մի նոր կոտորածից։ Անասելի բարբարոսութիւններ են եղել անպաշտպան հայերի վրայ փողոցներում երկուշաբթի և երեքշաբթի օրը՝ թիւրքերի կողմից։ Բ. Դուռը գործում է դեսպանների պահանջների հիման վրայ, կարգը վերահաստատելու։ Քաղաքը սկսում է հանդարտել, թէպէտ տեղ տեղ խառնակութիւնները դեռ ևս շարունակվում են։

Լոնդոն. 4 Հոկտ. Կատարեալ սարսափ է տիրում Կ. Պոլսում։ Անուղղակի և անկատար լուրեր են որ գալիս են խառնակութեան տեղից։ «Standard»-ը ասում է որ խռովութեան մէջ, տաճիկները 200 հայերի են սպանել։—Ընդհանուր կարծիք է կազմվում որ հայերը մեծապէս խառնեցին կառավարութիւնների գործը՝ գաղափարների յեղաշրջում պատճառելով Եւրոպայում, չը նայելով որ թիւրքաց ոստիկանութիւնը գործ դրեց մեծ զգաստութիւն՝ զսպելու համար խռովութիւնը։

Կ. Պոլիս. 6 Հոկտ. Սայիդ փաշան նշանակուել է արտաքին գործոց նախարար Թուրխան փաշայի փոխարէն։—Դեսպանները կը ներկայացնեն Բ. Դուռան հաւաքական ծանուցագիր, ստիպելով որ միջոցներ ձեռք առնուին դրութիւնը բարւոքելու համար։ Կարծվում է, որ մեծ Եպարքոս Քեամիլ փաշան խորհուրդ կը տայ Սուլթանին խռովութեան առիթով բանտարկեալներին ազատութիւն շնորհել (ամնիստի)։

Կ. Պոլիս, 7 Հոկտ. Բոլոր օտար մեծ կառավարութիւնները մի հաւաքական ծանուցագիր են ներկայացրել Բ. Դռան, որով պահանջում են ազգու և խիստ հարցաքննութիւն վերջին խառնակութիւնների մասին։ Պահանջում են արձակումն անմեղ բանտարկեալների և գերեզ միջոցներ ձեռք առնելու՝ Կ. Պոլսում խաղաղութիւնը վերահաստատելու համար։ Բ. Դուռը մի պաշտօնական ծանուցագիր է ստացել Անգլիայից, Ֆրանսիայից և Ռուսիայից, որը յայտնում է թէ նրանք չեն թողել տալ որ Կ. Պոլսում տեղի ունեցող խառնակութիւնները առկախ վիճակի մէջ ձգեն իրենց բանակցութիւնները, որոնց նպատակն է խաղաղ միջոցներով բէֆորմներ մտցնել Հայաստանի մէջ և ապահովութիւն տալ քրիստոնեայ բնակիչներին։

Կ. Պոլիս. 8 Հոկտ. Սուլթանը ուղարկեց Ֆուատ փաշային՝ քննելու Դարդանելի բերդերը. տօրպէդներ են ուղարկուած՝ Ցեղուցի մէջ տեղաւորելու համար։ Խռովութեան ժամանակ սպանուած հայերի 95 դիակներ են ժողովուած թաղելու համար։ Կարծվում է որ բաւական թւով դիակներ էլ ծովն են ձգուել։ Եկեղեցիները դեռ լի են հայերով, որոնք մերժում են դուրս գալ։ Պետութիւնս պահանջում է առանձին խնամք. վանքի ճաշը համարեա չեմ կարող գործածել (սոխ, տապտեղ, լոբիա, սատկոց միս)։ Բայց և այնպէս տարեկան ծախքս 500-ից չէ աւելանում։ Բայց այս տարուայ գոյացած պարտքս բոլորովին ինձ ձէր անհանգստացնում, որովհետև առողջութիւնս բաւականի լաւ էր և ես կարող էի այստեղ անդրելով թէ ամենական ռոճիկիցս մաս գանեի պարտքս վճարելու համար, և թէ իմ թարգմանութեանս տպագրութեան ստանալիք արդիւնքից կարող էի շուտով ազատուել ամբողջ պարտքիցս։ Բայց այս վերջին քանի օրերը կանոնիս պայմանները յանկարծակի փոխուեցան։ Ես ստիպված եմ հեռանալ վանքից մի առ ժամանակ. այդպէս եմ վճռել ես ինքս և այդպէս են ցանկանում իմ թշնամիներս, որոնց թէև ես արհամարանքի եմ..... *) սակայն նրանք կարողացել են Կաթուղիկոսի կամքն էլ ինձ հակառակ տրամադրել. շողոքորթութիւնով, բուրթիլնով,

*) Այստեղ մի բառ անընթեռնելի է։ Ծ. Խ.

*) Նոյնպէս անընթեռնելի. երևի «ենթարկում» բառը կը լինի։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԽՈՋԱՅԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Մի շատ հետաքրքիր նամակ է, որ տպագրվում ենք։ Նամակի գրող Լևոն վարդապետ Խոջայեանը այն անձն է, որ հայածական էջմիածնեցիներից և այնտեղ բուն դարձրած խաւար բանակից, գնաց մեռնելու Թիֆլիսում։ Սա այն իդէալիստ, հոգևորականութիւնը բարւոքել կամենալու երազով բռնված թշուառն էր, որի մասին լրագիրները շատ խօսեցին։ Նա մի անբնական տիպ էր, մի իդէալիստ, ասելի ճիշտ կը լինէր ասել՝ լուտոպիստ, որ յաւակնութիւն ունէր ապացուցանելու թէ շարժը կարող է բարի պտուղ տալ։ Մտաւ իր բարւոքելի դասակարգի մէջ և որպէս դասակարգի բարագործութիւնների հակառակորդ՝ հայածական իր պաշտօնակիցներից և նրանց սեղանի փշրանքով կերակրուող սնապարծներից, յուսահատ, ընկճված ու թոռչած, մեռաւ թոքախտից՝ աշխարհականների մէջ։

Նամակի իսկական լինելը երաշխաւորված է. իսկ հարկ եղած բացատրութիւններ ծանօթութեան մէջ՝ դրված է մեր կողմից։

—

Ս. Էջմիածին 7/XII 94 թ.

Սիրելի Գ...

Առաջին նամակս է, որ գրում եմ քեզ էջմիածնից, Աստուած տայ որ վերջինը չը լինի, ես հեռանում եմ վանքից. մի գուցէ այլևս չը վերադառնամ. մահկանացու ենք ամենքս, ես էլ տկար եմ։

Հեռագիր էի ուղարկել քեզ։ Անշուշտ զարմացար, որովհետև անսպասելի էր քեզ համար։ Ընորհակալ եմ՝ կատարումը տուել ես. մօրեղբօրիցս հեռագիր ստացայ արդէն՝ թէ փողը (100 բուբլի) ուղարկել է։ Ի՞նչ տպաւորութիւն էլ արած լինի վրադ իմ խնդիրքը (հարկաւ լաւ տպաւորութիւն չէ կարող անել այս փաստը, որ մի վարդապետ, այն էլ համալսարանական, փողի նեղութիւն է կրում էջմիածնում և ծանրանում է իր աղգականների վրայ), այնուամենայնիւ ես հաստատ համոզված եմ որ կարեկցութիւնդ շարժած կը լինի։ Ես ամաչում եմ ձեզնից, բայց ի՞նչ անեմ՝ ստիպեցայ ձեզ դիմել։

Համառօտակի նկարագրեմ վիճակս, որ դու էլ հասկանաս՝ ինչ պայմանների մէջ եմ ներկայումս։ Անցեալ տարի այս միջոցն էր, որ դիմել էի Սերովբ քեռուս և փող ուզել։ Ծանրացած տկարութեանս ժամանակ խիստ անհամոզոտացնում էին ինձ մի քանի խոշոր պարտքերս, որոնց գումարը հասնում էր 150 բուբլու։ Ընորհիւ քեռուս ուղարկած գումարին..... *) գլխաւոր պարտքերիցս ազատուեցայ և թէ որ գլխաւորն է՝ հոգեկան հանգստութիւնս գտայ, առանց որոց իմ տկարութիւնս լաւանալու շանս չունէր. կարելի է ասել, որ հոգեկան գոհութիւնը առողջանալուս գլխաւոր դեղն եղաւ։

Անցաւ մի տարի և բիւդջէի մէջ դարձեալ դիմիցիտ մնաւ։ Զարմանալի չէ, քանի որ 25 մանէթ ռոճիկ ունեմ ամսական և տկարութիւնս պահանջում է առանձին խնամք. վանքի ճաշը համարեա չեմ կարող գործածել (սոխ, տապտեղ, լոբիա, սատկոց միս)։ Բայց և այնպէս տարեկան ծախքս 500-ից չէ աւելանում։ Բայց այս տարուայ գոյացած պարտքս բոլորովին ինձ ձէր անհանգստացնում, որովհետև առողջութիւնս բաւականի լաւ էր և ես կարող էի այստեղ անդրելով թէ ամենական ռոճիկիցս մաս գանեի պարտքս վճարելու համար, և թէ իմ թարգմանութեանս տպագրութեան ստանալիք արդիւնքից կարող էի շուտով ազատուել ամբողջ պարտքիցս։ Բայց այս վերջին քանի օրերը կանոնիս պայմանները յանկարծակի փոխուեցան։ Ես ստիպված եմ հեռանալ վանքից մի առ ժամանակ. այդպէս եմ վճռել ես ինքս և այդպէս են ցանկանում իմ թշնամիներս, որոնց թէև ես արհամարանքի եմ..... *) սակայն նրանք կարողացել են Կաթուղիկոսի կամքն էլ ինձ հակառակ տրամադրել. շողոքորթութիւնով, բուրթիլնով,

թիւնների դեսպանական պահակ—նաւերը խարիսխ ձգեցին Ղալաթիայի մօտ՝ պաշտպանելու համար օտարականներին։

Կ. Պոլիս. 9 Հոկտ։ Բ. Դուռը փակեցաւ Կ. Պոլսի բոլոր Հայկական եկեղեցիները։ Ներսը եղողներին թոյլատրւած է դուրս ելնելու. ներս մտնելը արգիլւած է, նոյնպէս և կերակուր ներս տանելը։—Բանտարկւած անմեղ Հայերի արձակումը սկսւած է։

Կ. Պոլիս. Հոկտ. 9. (սեպտ. 27) Լուրեր են ստացւել Տրապիզոնից, որոնք հաստատում են որ մի գունդ զինւած թիւրքեր, որոնց մէջ եղել են նաև զինւորներ՝ յարձակւեցին այնտեղի Հայերի վրայ և շատերի սպանեցին։

Կ. Պոլիս. 10 Հոկտ. Բ, Դուռը պատասխանելով օտար պետութիւնների հաւաքական ծանուցագրին խռովութիւնների վերաբերութեամբ՝ խոստանում է քննութիւն բանալ և յայտարարում է որ Հայերն են եղել նախայարձակները ու սպանել են մուսուլմանները։ Բ. Դուռը խնդրում է դեսպաններից որ իրենց վերջին ճիգը գործ դնեն ճնշելու այն մեքենայութիւնները, որոնց նպատակն է աւելի լուրջ խառնակութիւններ յարուցանել։—Հայերը դուրս են եկել այն եկեղեցիներից, ուր վերջերս հաւաքւել էին։

Կ. Պոլիս. 11 Հոկտ. Թիւրք ազատամիտների մէջ էլ խռովութիւն է ծագել Կ. Պոլսում Սուլթանի կառավարութեան դէմ. դա շատ վրդովել է Սուլթանին. շատերն են ձերբակալւել, որպէս զաղափարակից Հայերի շարժումներին. վիրաւոր, սպանւած և անյետացածների թիւը 700 է հաշվում։

Կ. Պոլիս. 12 Հոկտ. Տրապիզոնում՝ տեղական զօրքերի թիւը աւելացրած է. կարգը վերահաստատւած է։

Բ. Դուռը ամրացնում է Բէզիկի ծոցը (Դարդանելի բերանը Լեմնոս կղզու մօտ)։

## ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻ

Ատրպատականի թեմը թափուր է։ Հաստատ աղբիւրներից մեզ լուր է հասնում որ Սուքիաս եպիսկոպոսը վերջնականապէս հրաժարւել է. իսկ այժմեան եղած առժամանակեայ փոխանորդ վարդապետը իրեն ընդունակ չէ ցոյց տալիս այդ ընդարձակ թեմը կառավարելու. մի թեմ, որի մէջ ծանր գործեր կան և ուր առաջնորդը եթէ կամենայ, շատ մեծ գործեր կարող է կատարել։

Մենք մի անգամ էլ ասել ենք, որ պարսկահայերի երկու առաջնորդները գրէթէ ամենակարող են. նրանց իշխանութիւնը գրէթէ բացարձակ է և նրանք, կրօնական իշխանութեան հետ, ունին նաև քաղաքական իրաւունքներ։ Նրանք իրենց ժողովրդի կառավարիչն են ճանաչվում մարմնական իշխանութեան կողմից։ Նրանցից է կախւած պարսկահայ ժողովրդի վատ կամ լաւ դրութիւնը, եթէ նրանք ներկայացնեն իրենցից ադմինիստրական մարդիկ, տակտով գործող, և տիրող կառավարութեան հետ լաւ յարաբերութիւն հաստատելու ընդունակութիւն ունեցողներ։

Ասել ենք և կրկնում ենք, որ այդ առաջնորդները պիտի լինին կրթւած, խելօք և մանաւանդ ազնիւ։ Մի հասարակ վարդապետ, որ ոչինչ չէ ներկայացնում իրենից, որ ոչ մի պատկառանք ազդող արտաքին կամ բարոյական յատկութիւն չունի, պարզ է որ մեր ունեցեցած հանդամանքներում, ոչ մի հեղինակութիւն ձեռք բերել չէ կարող տիրող կառավարութեան առաջ և հետևապէս ոչ մի լուրջ գործի կատարում չէ կարող ապ։

Ատրպատականի առաջնորդը ոչ միայն տեսքով պէտք է պատկառանք ազդի, այլ և պիտի լինի ամուր բնաւորութեան տէր, կրթւած, շրջահայեաց և դոնէ մի եւրոպական լեզու լաւ իմացող։ Եւ եթէ նա, պաշտօնի գլուխ անցնելուց յետոյ կարողանայ լաւ ընտրութիւն անել իր պաշտօնեաների մէջ ու հեղինակութիւն ձեռք բերել—նա մի մեծ բարիք կը լինի ատրպատականցոց համար։ Արդ, երկար փնտռելուց յետոյ մեր հոգևորականների մէջ մի այդպիսի մարդ, մենք մատնացոյց կարող ենք անել միմիայն երկու անձնաւորութեանց վրայ, որպէս ընտրելիներ, որոնք ունին պահանջւած յատկութիւնները։

Առաջինն է Արիստակէս եպիսկոպոս Սեգրակեան, որը այժմ Աստրախանի առաջնորդն է։ Դժուար չէ խնդրել որ Ատրպատական գայ. կարող ենք ասել որ Կաթուղիկոսը կը յարգի Ատրպատականցոց խնդիրը և անշուշտ կը տայ նրանց այդ եպիսկոպոսին։ Արիստակէս եպիսկոպոսի մասին բաւական կան վատ ցուցմունքներ. ամբաստանութիւններ, որոնք ոչ մի հիմք չեն ունեցել, անդատաբարդել են նրա վրայ։ Մենք այս կասենք միայն նրանց դէմ, որ սա այն եպիսկոպոսն է, որ գիտէ եւրոպական լեզուներ, թարգմանել է Դրէպերի «Եւրոպայի մտաւոր զարգացման պատմութիւնը»—մի գործ, որի թարգմանիչը որքան որ չը լինի, մի որոշ զարգացողութիւն պիտի ունենայ. այն եպիսկոպոսն է որ գրել է «Ամուսնական խընդիրներ» լուրջ աշխատութիւնը, որ մեկ ակ հէնց ինքը բաւական է ապացուցանելու հեղինակի կրթւած և զարգացած լինելը։ Այս այն եպիսկոպոսն է վերջապէս որ Գ. Ճեմարանի տեսուչ, նրանից առաջ էլ Թիֆլիզի թեմի առաջնորդ եղած՝ թողել է լաւ հետքեր։

Երկրորդ ընտրելին, որին առաջարկում ենք՝ մի համալսարանական է, մի աշխոյժ, գիտնական, իր աշխատութիւններով և գործերով յայտնի եպիսկոպոս, որ այժմ պաշտօն չ'ունի, որը թէև մի հեռաւոր վանք է քաշւել, սակայն անգործ նստել չէ կարող և որը իր գործունէութեան ընթացքում միշտ համակրանք է ազդել։ Դա Խորէն եպիսկոպոս Ստեփանէն է։ Գիտէ մի քանի եւրոպական լեզուներ, ունի Ատրպատականի համար պահանջւող նոյն իսկ արտաքին տեսքը, աշխուժութիւնն ու բնաւորութեան ամրութիւնը։ Խորէն եպիսկոպոսը եղել է խմբագիր, ուսուցիչ, քարոզիչ, թեմական առաջնորդ և միշտ լաւ հետքեր է թողել։ Նա անշուշտ կընդունի նոր պաշտօնը, քանի որ գործելու ծարաւ ունի, իսկ Ատրպատականը՝ գործելու համար մի լայնատարած անկախ ասպարէզ։ Սրբազանը, որ կարդում է «Շաւիղը» և նրանից անշուշտ եզրակացնում է թէ որպիսի մեծ գործերի գլուխ—բացարձակ գլխաւոր—լինելու է կոչւելու, կարող է ըմբռնել որ իր կրթութեամբ, ամուր բնաւորութեամբ և ուսումովը՝ մեծ բարիքներ պիտի սերմանի Ատրպատականում, եթէ նրան յաջողւի այդ թեմի առաջնորդը լինել։

Ահա այդ երկու անձն են մեր ընտրելիները։ մենք գերադասում ենք երկրորդին. նրան շատ աւելի յարմար ենք գտնում, նամանաւանդ որ՝ ա այժմ պաշտօն չունի։

Ատրպատականցոց է մնում ուրեմն կազմել կամ ժողով և կամ մի հանրագրութիւն, ուղարկել մի երկու պատգամաւոր վեհ. Կաթուղիկոսին և խընդրել երկուսից մէկին իրենց առաջնորդ։

Պաշտօնները այժմ ծանր են, Ատրպատականի թեմի գործերը մնացել են սարսափելի խառն դրութեան, անկարգ վիճակի մէջ. ամեն տեսակ դիմակաւոր շառլատաններ գաւառների մէջ յանուն կրթութեան, յանուն կրօնի՝ ժողովուրդն են կեղեքում. դպրոցները, ամեն տեղ, ձանձրացնելու չափ յարատևող անկարգ վիճակի մէջ են գտնվում, ապիկար վարժապետների, զանազան կողմերից թափւած բաղտախնդիրների ձեռք խաղալիք են եղել. ազգ. կալւածների խնդիրներ կան... մի խօսքով հարցեր որոնց լուծելու, մաքրելու համար մի զօրեղ կամք, կրթւած միտք և ազնիւ ոգի է հարկաւոր...

Ատրպատականին առաջնորդ է պէտք ուրեմն թող ատրպատականցիք շտապեն ընտրութիւն կատարել, ինչպէս ասացինք, երկու պատգամաւոր ուղարկեն Էջմիածին և կամ գրաւոր խնդիրքով Կաթուղիկոսից խնդրել պահանջւած անձը։ Կաթուղիկոսը ժողովրդի պահանջը չի մերժիլ, մանաւանդ որ նա ինքը քաջ գիտէ մեր ասած երկու ընտրելիների արժանաւորութիւնները։

Մեր հոգևորականութեան մէջ երկու միակ արժանաւոր անձնաւորութիւններն էին, որոնց մենք առաջարկեցինք որպէս արժանաւորների, առանց այլ և այլ միտումներ աչքի առջև ունենալու։ Խորէն եպ. Ստեփանէին մենք ներկայացնում ենք որպէս առաջին ընտ

---

մօտենալով վեհարանի ծառաներին, Կաթուղիկոսին, շրջապատող ազա-էֆենտիներին, ինչպիսի ուղես զրպարտութիւն կարողանում են հասցնել Կաթուղիկոսի ականջը, որ, պէտք է խոստովանել, վարժւել է Տաճկաստանում իր ականջների մօտ փափաց լսել աւելի, քան թէ ազատ համարձակ պատասխան, բացադրութիւն։ Իմ թշնամիները ոչ միայն հեռացնել կը կամենային ինձ վանքից, այլ եթէ ձեռներից գար, կը խեղդէին ինձ Ներսիսեան լիճում։ Այն խեղճ մեր Մինասն *) էլ, որի բարոյական տիպարը խիստ դժգոյն երևաց, եթէ չասեմ աւելին, նա էլ մեծ եռանդով կրկնում է քունջ-բունջախում.... «Լեռն վարդապետի մօրուքը պէտք է խուզել...» Չը կարծես, որ մի գործ է պատահել, մի սխալ բան իմ կողմից, կամ յանցանք եմ գործել, որ այդպէս զայրացել են իմ դէմ. ոչ, այդ պատմութիւնը շատ հին է, դա սերտ կապ ունի այս կողմերում խիստ լարւած կուսակցական կռիւների հետ։ Իսկ թուրթակ Մինասը, որ գալով այստեղ հաղիւ երկու երեք անգամ է տեսնւել ինձ հետ, այն էլ դուրսը, որ այստեղի գործերի մասին բնաւ մի խօսք չէ խօսացել ինձ հետ, չէ ծանօթացել իմ հայեացքների հետ, ներկայումս իմ ոխերիմ թշնամիների «դուդուկը կը շալէ»։ Աղոր չեմ զարմանում, որովհետև իր կարճ խելքով, երևակայական զարգացումով եկել մտել է սատանաների բունը և ընկերացել հին աղուէսների հետ. ընտանւածէ մի պարոնի հետ, որ իմ արիւնը մինչև վերջին կաթիլ կը խմէր, եթէ կարողանար։ Դրա հետ մենք գործ ենք ունեցել ճեմարանի մէջ ուսուցչութեանս ժամանակ և սաստիկ ընդհարւել ենք 90 թուականին։

Կամենում եմ կարճ գրել, որ չը ձանձրացնեմ քեզ, վախում եմ երկարի նամակս. այնքան բան կայ գրելու, որպէս զի մօտաւորապէս մի պարզ գաղափար կազմես այստեղի գործերի մասին։ Բայց համբերութիւն ունեցիր մի անգամ կարդալու այս երկար նամակս. լրագիրներից շատ կարող երբէք այսպիսի ամփոփ տեղեկութիւն ստանալ էջմիածնի գործերի մասին և նրա մօտ անցեալի։

Իմ ուսուցչութեանս առաջին տարին (1889) Մակարն էր Կաթուղիկոս։ Սա մեղուականների սլաքն էր։ Հաւաքել էր վանքի մէջ այդ կուսակցութեան գլխաւորներին—Պետրոս Սիմէոնեանցն էլ այստեղ։ Ճեմարանն էլ նրանց մարդկանց ձեռքումն էր։ Վանքի միաբանութեան մեծ մասն էլ այդ ուղղութեան մարդիկ էին. եթէ դժգոհութիւն ունեցողներ կային՝ իրանց զգացմունքները փորերից դուրս չէին գալիս. այդպէս է վանականի վիճակը. Կաթուղիկոսը «այո» ասէ՝ միաբանն էլ պիտի ասէ «այո». Կաթողիկոսը—«ոչ» միաբանն էլ—«ոչ»։ Այն ժամանակ տիրում էր մի դեվիզ. «Չը համարձակւել սեփական դատողութիւն ունենալ»։

Պատահեց ճեմարանի խռովութիւնը. զոհ եղան շատերը՝ աշակերտներ, վարժապետներ։ Դժգոհութիւնը տեսուչ Նահապետ վարդապետի դէմ էր։ Որպէս զի Կաթուղիկոսի առաջիր հեղինակութիւնը չընկնի և մասամբ էլ հասարակութեան առաջ արդար երևի, ինչպէս և միշտ արել են այդ մարդիկը՝ այն անգամ էլ դուրսը գաան ճեմարանի խռովութիւնների պատճառը... «Մեզանից անբաւական չեն աշակերտները, մենք լաւ ենք մեր պաշտօնների կատարում.... դրսի չար մարդիկն են, որոնք դրդել են աշակերտներին աղմուկ հանել վարչութեան դէմ. այն երկու վարժապետներն (որոնք իրանց խմբի անդամներն չեն՝ ասում Ս. Լիսիցեան) գործիք են դրսի չարակամների ձեռքում...» և այլն այսպիսի անհիմն մեղադրանքներ, ճիշտ այնպէս, ինչպէս բացատրում էր Կատկովը համալսարանի խռովութիւնները «դրսից է... Ղվէյցարիայից... հարեւանի թշնամիների գործն է.» ասելով, թ

ըելի։

Շարժուելու ժամանակ է, թող Ատրպատականցիները ուշք դարձնեն մեր ասածների վրայ, եթէ չեն կամենում որ իրենց գործերի ներկայ դրութիւնը վատթարանայ հետզհետէ, մնալով անղեկավար, անխնամ։

Թող ըմբռնեն նրանք մի անգամ ընդմիշտ, որ մի կրթուած և խելօք առաջնորդ ընդունակ է պարսկահայ գաղութներին ցանկալի լաւ դրութեան հասցընել, քանի որ տիրող կառավարութիւնը միշտ մի առանձին հոգատարութեամբ է որ նայում է իր հայ հպատակների վրայ, առաջնորդներին արտօնել է գործելու ամենամեծ ծաւալով և չէ պատահել որ որևէիցէ ժամանակ մերժած լինի նրանց խնդիրները։

Ուրեմն հարկաւոր է ընտրել այնպիսի առաջնորդ, որ գիտենայ ժողովրդի պահանջը, ազնիւ լինի՝ իր իշխանութիւնը չարաչար ի գործ չը դնելու համար և հասկացող՝ որ կշռէ ուզելիքներն ու կարող լինի հեղինակութեամբը կանգուն պահել իր ժողովրդի արտօնութիւններն ու իրաւունքները։

Համեմատաբար, այդպիսի առաջնորդ Ատրպատականի համար, կարող է լինել մեր ցոյց տուած ընտրելիներից մէկն ու մէկը, մանաւանդ Խորէն եպիսկոպոս Ստեփանէն։

Ա. Ֆ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԴԱՒՐԷԺԻՑ

17 սեպտ. 95

Դավրէժը իր սովորական անշարժ կեանքի շրջանակից կարծէք երբէք տրամադրութիւն չունի դուրս գալու։ Նոր սկսուող ուսումնական տարեշրջանը զուցէ մի քիչ փոփոխութիւն մտցնի այդ միանման և միապաղաղ կեանքի մէջ...

Ամբողջ հայկական աշխարհը մի առանձին ոգևորութեան մէջ է, հայկական հարցի նորագոյն զարգացմամբ և տենդային անհամբերութեամբ հետևում է լրագրութեան, սակայն Դավրէժում ոգևորութեան նշոյլ անգամ գոյութիւն չունի։ Կարծէք սրանց երբէք չի հետաքրքրում հայկական հարցը։ Ցաւալի է, որ մեր Պարզկահայ եղբայրն էլ չի մասնակցում թէ բարոյապէս և թէ նիւթապէս իր՝ հեռաւոր տեղերում գտնուող սովվալուկ եղբօրն օգնելու և աջակցելու գործին։ Սակայն քաղցր է մեզ յուսալ, որ պարոկահայը կաշխատի գործնականապէս ապացուցանել ընդհակառակը—գոնէ ներկայ այրող բոպէում։

Դպրոցական նոր տարեշրջանը Դավրէժում սկսուեցաւ մի հանդէսով, որը կազմակերպել էր Բերդաթաղի դպրանոցի վարչութիւնը, նոյն դպրոցի հիմնադիր հոնդուցեալ Սահակ եպիսկոպոս Սաթունեանի յիշատակին։

Հասարակական և դպրոցական հանդէսներ Դավրէժում շատ սակաւ անգամ են տեղի ունենում. եղածներն էլ այնքան աղքատիկ և այնքան միանման բովանդակութեամբ են լինում, որ ոչ մի բարերար հետք չի թողնում. յաճախողը, հանդիսից դուրս գալով՝ ոչ մի նոր տպաւորութիւն, ոգևորութիւն չի դուրս բերում. այդպիսով հանդէսը միանգամայն անհամապատասխան իր կոչման՝ կորցնում է իր կրթիչ նշանակութիւնը մի կողմից, միւս կողմից էլ ձանձրացնելով հասարակութեան՝ յետ է մղում նրան, փոխանակ գրաւելու...

Մասնաւորեցնելով մեր խօսքը Բերդաթաղի դպրոցում սեպտ. 17.իր տեղի ունեցած հանդիսի վրայ այսքանս կասենք, որ նա էլ սովորական, միանման և ձանձրացուցիչ հանդէսների կարգից էր. նոր էր և տպաւորիչ երկու տեղացու կեանքից գրած ստանաւորներ, որոնք գեղեցիկ կերպով ասացին երկու աշակերտուհիներ։ Իր տարօրինակութեամբ, նոր էր նաև մի պարոնի կարդացած ճառը, որտեղ պարոնը կոկիկ, գեղաբնտական բառերով դրատելով մեր թարգմանիչներին—Սահակ և Մեսրոպի, վերջացնում էր մի բողոքով դէպի դպրոցական վարչութիւնները, որոնք ճառախօսի կարծիքով «կուսակցական նեղ ոգին մտցրել են նաև դպրոցներում...» Թէ ինչ կապ ունի Սահակն ու Մեսրոպը և «կուսակցական նեղ ոգին», այդ Աստծուն է յայտնի։ Երևի ուզում էր ապացուցանել, որ ս. Սահակ ու Մեսրոպը նեղ կուսակցական մարդիկ չէին... ուրեմն և պէտք է վերացնել մեր դպրոցներից «կուսակցական նեղ ոգին»։

Ներկայում Դավրէժումն է դերասան պ. Մատթէոս Աղայանը, որը տրամադիր է ամբողջ ձմեռը մի շարք ներկայացումներ տալ, եթէ տեղական ոյժերը աջակցեն և մասնակցեն իրեն։ Վատ չէր լինի, կարծում ենք, եթէ յաջողուէր պ. Աղայանին Դավրէժում մնալ. գոնէ տեղական փրողների դէպի թատրոնն ունեցած ճաշակը մասամբ կը զարգանար համեմատաբար / հարկէ, միւս կողմից էլ ձմեռն ուրախ կանցնէր Դավրէժի թմրած և անրովանդակ կեանքում։

Նշտար.

### ՆԱՄԱԿ ՄԱՐԱՂԱՅԻՑ

23 սեպտ. 95.

Տեղոյս Հայ հասարակութիւնը անհամբեր կերպով սպասում էր Ալմաստի վարդապետ Աղսէն Վեհունու գալուստեան։ Անչափ ուրախութիւն և բերկրանքէր տիրում մամիտ հասարակութեան սրտում այն պատճառով, որ կարծվում էր թէ նոր եկող գուցէ վերջ տար ներքին խռովութիւններին, ու բուժէր վիրաւորեալներիվերքերը։

Սեպ. 19-ին յայտնուեց հայը սուրբը իւր հետ ունեցած երկու ծառաներով, մէկը հայ, իսկ միւսը պարսիկ, նա էլ գինուոր։ Մինչև հայը սուրբի շնորհ բերելը, Մարաղայի կուսակցութիւնները չէին ամրակազմուած, կեղտոտութիւնն իր գագաթնակէտին հասած. այժմ հայր սուրբի մուտք գործելուց յետոյ, ամրակնդրեցին կուսակցութիւնները, յուզմունքը սաստկացաւ երկպառակութիւնները ւիանգամայն լարուեցին այն աստիճան, որ միմիանց ստուերին հրացան են արձակում։ Հայր սուրբի ամենաառաջին ուրբելու խնդիրը քահանայականն էր, իսկ երկրորդը հոգաբարձութեան դատելեցնելու և ուրիշ հոգաբարձութիւն ընտրելու և ապա ուսուցչականը։

Ահա թէ հայր սուրբը ինչ արաւ։ Փոխանակ կախարդ տէրտէրին փիլոնազուրկ անելու, Տէր Տաճատին մեղաւոր դտաւ. արդարութեան կողմը բռնող մարդկանց պատասխանում է վարդապետը հետևեալ խօսքերով «կտամ սարփզը (գինուորը) քեզ կը. կապէ, հարիւր փայտ կուտես, լիսուն թումման ջարիմայ կաս»։ Իսկ ով կը համարձակուէր խօսելու։

Աչքներս լոյս, հայր սուրբի և մի զուգականներից բկերները միայն մնացել էին. այժմ նրանց հաբաղաղ ժառանգներն են «տրդարական» անուանածները, որոնց թարւի դժբախտութիւն ունեցել պատկանելու մեր պան)։ Մակարի մահից յետոյ այդ կուսակցութիւնների կռիւ մասաւանքի մէջ։ Մոբդրդրականների համար մեծ հարուած էր վանքի (էջմիածնի) իշխանութիւնից զրկուելը, որովհետև էջմիածինը անմիջական կատարողն է մի բոլոր ազգային հիմնարկութիւնների վերբերեալ գործերին, պաշտօնների մէջ հաստատող։ Իսկ այդ անիծածները մինչև վերջին ժամանակ իրանց համար վնասակ էին արել ազգային հիմնարկութիւնների մէջ ժառանգաբար պաշտօններ վարելով, օգուտ ազգային դրամներից, ապահովացնել իրանց, գործածել ազգի փողը իրրև իրանց հօրենական ժառանգութիւն. հոգաբարձու էր դպրոցի—նա տէր էր. դպրոցի փողերը կամ փողերի հետ կը խանէր... Երեցփոխ էր ժամի—ծխական գումարների մասին ով կարէ համարձակէր հաստատիրի շնորհիւ, Յովհաննը նորից վարժապետ եղաւ. վեց ամիս առաջ Յովհաննի դատարանին տուած տուգանքն էլ աւելացրին նրա ռոճիկի վերայ։ Առայժմ այսքան. հայր սուրբի յետագայ քաջագործութիւնների մասին եկող փոստով։

Աքսոր.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսուհետև աւաջին երեսում կը տպագրենք հեռագիրներից այն բոլորը, ինչ որ կը վերաբերի հայկական հարցին կամ հայերին։ Այդպիսի հեռագիրները կ'ունենան «վերջին հեռագիրները» վերնագիրը և կը լինին առաջնորդող յօդուածներից առաջ։ Միւս հեռագիրները կը տպագրուեն իրենց տեղում, չորրորդ երեսի վրայ։

—

Կ. Պոլսի խռովութիւնները շատ լուրջ հետևանքներ ունեցան. քաղաքը գրէթէ պաշարման դրութեան մէջ է դրուած. դեսպանատները ստիպուած են իրենց հպատակներին պաշտպանելու համար խիստ միջոցներ ձեռք առնել։ Դրութիւնը կրիտիկական է և մօտ օրերումս վերջնականապէս անշուշտ կը վճռուի հայկական հարցը։ Ընթերցողին յորդորում ենք շատ ուշք չը դարձնել մեր հեռագիրները հաղորդող գործակալութեան սեփական կարծիքների վրայ զանազան խնդիրներում։ Այդ գործակալութիւնը շատ է սիրում իր սեփական կարծիքը ծախել «կարծվում է, ընդհանուր կարծիքն է» և կամ «համարվում է, նկատվում է» անորոշ բառերով։ Դրան իբր փաստ այն, որ իր հոկտ. 4-ի Լոնդոնից հեռագրում ասում է «ընդհանուր համաձայն կարծիքն է, որ... և այլն, մինչ հոկտ. 7-ի Կ. Պոլսի հեռագրով յայտնում է որ «ստացել է մի պաշտօնական ծանուցագիր Անգլիայից, Ֆրանսիայից և Ռուսիայից, որ յայտնում է թէ»... և այլն։

—

«Մշակը» յայտնում է որ Թէհրանի միջազգային տրանսպորտի ռուսաց բանկը դադարեցրել է իր գործունէութիւնը,

---

իրանց անընդունակութիւնը կամ վատութիւնը չէր արդեօք պատճառ. շատ անգամ կրկնուող այդ երևոյթին (իրանց խմբի գործունէութեան ընթացքում թէ էջմիածնում մի քանի անգամ, և թէ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում)՝ դրա մասին ի հարկէ կասկած յայտնել չեն էլ մտածում. իսկ Կաթուղիկոսը իրանց պաշտպանն է։—Մեզ արձակեցին, իբրև անհանգիստ բնաւորութիւն ունեցողների և մեզ հետ 28 Ուսանող I, II և III լսարանների։ Ես ստիպուած հեռացայ էջմիածնից և մերձակայ գիւղերից մինում վարժապետութեան մտայ։ Բայց Նահապետեան չէր հանգստանում, նա աշխատում էր վնասել ինձ. ուզում էր վարժապետութեան իրաւունքից զրկել, որ ես զինուորական ծառայութեան մտնեմ, բայց ի զուր. չը յաջողացրեց, որովհետև ինքը անսպասելի հարուած ստացաւ. վանքի կեանքում կատարուեց «deus ex machina». Մակարը մեռաւ. վանքը տակն ու վրայ եղաւ։ Վանքի լիազօր աէրերը (մեղուականներ) յանկարծակի խորտակեցան, որովհետև Կաթուղիկոսի մահից յետոյ բարձրագոյն իշխանութիւնը անցնում էր Երեմիա եպիսկոպոսի ձեռքը, որ տեղակալ էր։ Իսկ սա մեղ բարեկամ էր և ուրեմն նրանց հակառակ. թէև Կաթուղիկոսի կենդանութեան ժամանակ բնաւ ձայն չէր հանում, որովհետև նշանակութիւն չունէր, իբրև մեղուականների խմբին չը պատկանող մարդ։

Երկար կը լինէր պատմել տեղակալութեան ժամանակների պատմութիւնը. լրագրներից քիչ շատ գաղափար կազմած կը լինես։

Տեղակալը նոր մարդիկ ներս բերեց վանքը և առաջինը եղաւ, որ մտցրեց վանքում նոր հոսանք՝ հին—մեղուականների ուղղութեան հակառակ։ Վանքի նոր միաբանները և հներից մանաւանդ Արիստակէս եպ. Սետրակեանը՝ վայելում էին «Մշակի» համակրութիւնը բնականաբար, որովհետև մեղուականներին հակառակ էինք թէ մենք, և թէ «Մշակը»։

Դրսում արդէն վաղուց կռիւ կար մեղուականների և մշակականների մէջ (իսկապէս մեզ համար պարզ է, միայն մնացել էինք մենք նրանց հաբաղաղ ժառանգներն են «տրդարական» անուանածները, որոնց թարւի դժբախտութիւն ունեցել պատկանելու մեր պան)։ Մակարի մահից յետոյ այդ կուսակցութիւնների կռիւ մասաւանքի մէջ։ Մոբդրդրականների համար մեծ հարուած էր վանքի (էջմիածնի) իշխանութիւնից զրկուելը, որովհետև էջմիածինը անմիջական կատարողն է մի բոլոր ազգային հիմնարկութիւնների վերբերեալ գործերին, պաշտօնների մէջ հաստատող։ Իսկ այդ անիծածները մինչև վերջին ժամանակ իրանց համար վնասակ էին արել ազգային հիմնարկութիւնների մէջ ժառանգաբար պաշտօններ վարելով, օգուտ ազգային դրամներից, ապահովացնել իրանց, գործածել ազգի փողը իրրև իրանց հօրենական ժառանգութիւն. հոգաբարձու էր դպրոցի—նա տէր էր. դպրոցի փողերը կամ փողերի հետ կը խանէր... Երեցփոխ էր ժամի—ծխական գումարների մասին ով կարէ համարձակէր հա-

---

շիւ պահանջել նրանից....

Մեղուականն է—ուրեմն նա միայն արժանի է տեսչական պաշտօն վարելու և մեծ ռոճիկ առնելու։ Բոլոր այդ պաշտօնների մէջ կատարուած գործունները վաղուց արդէն աչք էին ծակում։ Հանգուցեալ Արծրունին տեսնում էր ամեն բան և յարձակվում էր վրանները, բայց զգալի օգուտ չունէր նրա աշխատանքը որովհետև հողոր իշխանութիւնը պաշտպանում էր նրանց. բացի Կաթուղիկոսից առաջնորդներն էլ, յաջորդներն էլ այդ մարդոց բարեկամներն էին, որովհետև իրանց էլ շահ կար՝ զողակից էին նրանց։ Հասարակութեան աչքն էլ բացվում էր շնորհիւ Արծրունու անվեհեր յարձակումներին։ Դարձեալ չէին ազատվում ազգային հիմնարկութիւնները այդ ցեցերից։

(Կը շարունակի)

ՀԸ կարողանալով շահաւոր գործեր կատարել։

—

Խոլերան Ռուսաստանում կոտորածները է անում, միայն Վօլինի նահանգում վերջին երկու շաբաթուայ ընթացքում մեռել են 2134 հոգի։

—

Ֆրանսական շատ տարածուած «Revue des Revues» կիսամսեայ հանդէսը իր № № 17 և 18-ում (սեպտ. 1-ի և 15-ի համարները) հայկական հարցին նուիրել է մի վառվռուն յօդուած «Un peuple de martyrs» վերնագրով, որի հեղինակը նոյն իսկ խմբագիր Ժան Ֆինոն է։ Յօդուածը հայերի ներկայ դրութիւնը համառօտակի նկարագրելուց յետոյ, վերջացնում է իր խօսքը, հրաւիրելով Ֆրանսական կառավարութեան, մասնակցելու այդ «մարտիրոս ժողովրդեան» պաշտպանութեանը։ Խմբագրի յօդուածին կից գրուած է նաև յայտնի անգլիացի Մալբոլմ-մաք-քօշի «Հայաստանը Եւրոպայի առաջ» գրուածքի թարգմանութիւնը՝ պատկերազարդ։ Պատկերները յաջող են, բացի կաթուղիկոսինը։ Ցաւում ենք որ մեզ անհնար է (մեզնից անկախ պատճառներով) տալ այդ յօդուածներից գոնէ առաջինի թարգմանութիւնը, սակայն մեր թէհրանի Ֆրանսերէն կարդացող բաժանորդների տրամադրութեան տակ ենք դնում հանդէսի երկու համարները, որոնց կարող են վերցնել խմբագրութիւնից՝ կարդալու համար։

—

«Մշակ» լրագրի նոր հրատարակիչ պ. Անդրէաս Արծրունին յայտարարում է որ 1896 թուից «Մշակը» կը հրատարակուի շաբաթը չորս անգամ, որ թերթը ոչ իր ուղղութիւնը և ոչ էլ խմբագրութեան անդամները կը փոխի։ Իսկ խմբագրութիւնն էլ իր կողմից յայտնում է որ պ. Անդրէաս Արծրունին սեպտ. 12-ից սկսած ստանձնում է հրատարակչի կոչումը։ Նեղտուած է «հրատարակչի» բառը։ Կարծում ենք որ շեղտել պէտք էր աւելի «կոչումը» բառը։ Ուրեմն «Մշակը» նոյնը կը մնայ և անփոփոխ՝ ինչ որ 1894 թուի ընթացքում եղել է։ Պ. Անդրէաս Արծրունու նոր կոչում ստանձնելը միայն այն արդիւնքը կունենայ, որ թերթի տակ կաւելանայ «Հրատարակիչ՝ Անդրէաս Արծրունի» բառերը։

—

«Մշակը» հաղորդում է որ սեպտ. 9-ից »Нов-Обоз» լրագրին հեռագրում են թէ նախագծվում է երկաթուղու գիծ անցկացնել Ռուսաստանի սահմանական կէտերի և Պարսկաստանի մէջ։

—

Ուրախութեամբ հաղորդում ենք որ վերջապէս Երևանի թեմը ազատուել է Բենիկ աբեղայ անունով վարդապետի թեմական վերատեսչութիւնից։ Նոյն թեմի առաջնորդ է նշանակուել Անանիա եպիսկոպոսը, որը Տաթև էր գնալու իբր աքսոր։ Վեհ. կաթուղիկոսը երևում է որ «համոզման տէր» մարդ է։

Ռէյտէրի գործակալութիւնը սեպտ. 18-ից հեռագրում է որ «Լոնդոնի արտաքին գործերի մինիստրութիւնը պաշտօնապէս յայտարարում է թէ ոչ մի խօսք ճիշտ չէ այն լուրի մէջ, որ իբր թէ տէրութիւնների և Բ. Դուռն մէջ համաձայնութիւն է գոյացել հայկական հարցի առթիւ»։

—

«Հայրենիք» թերթի իւրաքանչիւր համարում շարունակվում է տալ այն պաշտօնական ծանուցումը, որը ուզում է հաստատել թէ «շնորհիւ վեհ. Սուլթանի» Վանի, Կամախի և այլն և այլն բոլոր նահանգների մէջ «խաղաղութիւնն ու անդորրութիւնը կատարեալ է»։

—

Էլի նոյն թերթն է որ հաղորդում է Ադրիանապօլսի յայտնի զգուելի Մեսրոպ եպիսկոպոսի մասին հետևեալը։ «Մեծ-Եպարքոսը ծանուցած է դաւադրական ու կրօնական գործերու նախարարութեան թէ կայսերական Իրատէ մը հրամայած է եվմտական գանձէն 2500 ղրուշ յատկացնել ուտալ Էտիրնէի նախորդ առաջնորդ Ֆ. Մեսրոպ եպիսկոպոսի»։

—

Դավրէժից մեզ գրում են։ Անցեալ երեքշաբթի, Դավրէժում մի պարսիկ կնոջ, քաղաքիս Արք կոչուած բարձրութիւնից կառավարութիւնը վայր նետեց։ Պարսկական դատաստանի մի նմուշն է այդ։ Պատճառը եղել է այն, որ յիշեալ կինը մէկ փոքրիկ աղջիկ է խեղդել, նրա վրայի ոսկեղէն զարդերը յափշտակելու դիտաւորութեամբ, պանցանը շուռով յայտնուելով, յանցագործը կրեց իր արժանի պատիժը, թէև մի քիչ տարօրինակ ձևով։

—

Սալմաստի Փայաջուկ գիւղից տխուր և անմխիթար լուրեր են հասնում, անտեղի նոր գիւղատիրոջ գալուստի անարդար վարմունքների մասին դէպի այդ զուտ հայաբնակ գիւղացիները։ Մինչև այդ նոր գիւղատիրոջ գալը, գիւղացիք կառավարութեանը հասնելիք հարկերը իրանց հաւաքում և յանձնում էին կառավարութեան. այժմեան գիւղատէրը պահանջում է այդ հարկն էլ հարկէ յաւելումներով։ Գիւղացիք մի երկուսը ուզում են այժմեան տէրոջից, որը պահանջում, աւելորդ՝ «Հայը չի տալ ինչը», լուց յետոյ, կը տայ։ Ինչ փայաջուկցիների համար։

—

Սալմաստից «Նոր-Դար» ինն գրում են որ իբր թէ Փայաջուկի գիւղի Տէր Ս. Աւետիքը իր ներկի կաթսայի մէջ է կոխում Մահլամի գիւղի քահանային և խաղում եռացրած ջրի մէջ։ Որքան ճիշտ է այդ լուրը։

—

Կ. Պոլսից հասնող վերջին լուրերը յայտնում են որ նոր լրտես, որը հայ էր և Նիկոմեդիայի լարնուած է մի տոնեայ։ Այդ լուրը հաստատումն է «Հայրենիք» թերթն էլ՝ երկարօրէն նկարագրելով Սենեքերիմ «էֆէնդու» զարնուելը։

—

Վանաք գիւղի դպրոցի համար նշանակուած է Քեռազազի նախկին ուսուցիչ պ. Արսեակը, որ Սասունցի դպրոցի նախկին սաներից է։ Դա լաւ ընտրութիւն է և յոյս ունինք որ Վանաքի դպրոցը այսուհետև կը սկսի նշմարելի օգուտներ առաջացրել։

—

Ֆրանսական «La Revue de Paris» մեծ ամսագրի սեպտեմբերի համարի մէջ ևս գտնում ենք մի մեծ յօդուած թիւրքա—հայոց մասին, «Սասունի կոտորածը» վերնագրով, Լավերյնի գրած։

—

Թիֆլիզում կազմուել է ուսուցչական փոխադարձ օգնութեան դրամարկղի խնդրի մասին մի վճիռ, որ է՝ «առաջիկայ տարուայ ընթացքում զանազան քաղաքներում գտնուող ուսուցչական խմբերը պիտի աշխատեն իրանց մէջ մի մի գումար ժողովել որ ապագայում կազմուելիք դրամարկղի հիմքը լինի»։ Թող լինի—բայց դա այնպիսի անորոշ վճիռ է, որ ոչ մի հետևանք չէ ունենալու։ Ի՞նչ է նշանակում ասել «թող անեն»։ Հարկաւոր է մասնաժողով ընտրել մի կետրոնում որ սկսի անել, գումարել, դրամարկղը կազմել, կանոնագրութիւն հաստատել և հրաւիրել ուսուցիչներին անդամ գրուելու, ապա թէ ոչ պ. Ե. Ղազարեանի մի «պիտի անել, թող անեն» բառերով լիքը նամակը ոչ վճիռ կարող է առաջ բերել, ոչ գործ. իսկ միայն այդպիսի նամակ կազմելու համար աւելորդ էլ էր «մի քանի տարի խօսակցութեան առարկայ շինել» և «սովորական վիճաբանութիւններից յետոյ ընդհանուր համաձայնութեամբ» վճռել։ «Մուրճի» մէջն է, որ տպուած է պ. Ե. Ղազարեանի այդ՝ երկար վիճաբանութիւնների կոնկրետ արդիւնք՝ նամակը։

—

Անցեալ համարում, քաղելով Կովկասեան թերթերից, հաղորդել էինք, որ սպանուած է Կիլիկիոյ գործերի ժամանակ կեղտոտ դեր խաղացող մի եպիսկոպոս։ Այժմ «Մշակի» Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է որ այդ լուրը չէ ճշտվում։

—

Մեր տրամադրութեան տակ նուէրի համար եղած երկու օրինակ «Շաւիղից» մէկը յատկացուեց Համադանի նորակազմ դրադարանին։

—

Մեր «Վերջին հեռագիրներ» վերնագրով կտորի մէջ, վերջինից առաջին հեռագիրը (Կ. Պոլիս 11 հոկտ.) սխալ է թարգմանուել՝ որ և ուղղում ենք։ Պիտի լինի։—«Այստեղ մի յուզմունք կայ թիւրք ազատամիտների մէջ սուլթանի կառավարութեան սիստեմի դէմ. դա նոյնչափ վրդովմունք է պատճառում Բ. Դուռն, որքան հայկականը. մի քանի մասնակից ազատականներ բռնուած են։—Խռովութեան առաջին անգամ ծագելիս եղած սպանուածների, վիրաւորուածների և կորուածների թիւը 700 է հաշվում։»

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՐԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—

Լոնդոն. Հոկտ. 4. (Ն. տ.) Քեամիլ փաշան, նոր ելարքոսը ընդունակ և լուսաւորուած մարդ է և յայտնի է որպէս անգլեասէր իր հակումների մէջ։

Փարիզ. 4. Հոկտ (Ն.տ.) Նախագահ Ֆորը Ռուսաց ալտ. գործոց նախարար Լոբանովին շնորհեց պատուոյ Լէգէօնի մեծ ժապաւէնը։

Փարիզ. 6 Հոկտ. Այսօր տեղի ունեցաւ Լուի Պաստէրի թաղումը մեծ հանդիսաւորութեամբ։ Մի վաշտ գինուոր յուղարկաւորեց մարմինը մինչև Նոտր—դամի եկեղեցին։ Նախագահ Ֆորը և կառավարչական ամբողջ մարմինը ներկայ էր։—Անտանանարիվօից Սեպտ. 22-ից լուր է գալիս որ Հովան՝ երկ Հովա թագուհին հրապարակել է մի մանիֆեստ, որով նա ամբաստանում է իր զօրքը վախկոտութեան մէջ և մերժում է թողնել մայրաքաղաքը։ Ֆրանսական թղթող գունդը Յոյին կը մտնի Մատագասկարի մայրաքաղաքը։ Թագուհին յայտնել է որ երբէք անձնատուր չէ լինելու և կը մեռնի իր պալատի մէջ։

Հոգոմ, Հոկտ, 7. Աբիսինեայից լուրեր են հասնում որ Մադասիա, սպառնացող դիրքի պատճառով հաւաքում է զօրք Անտալիի հարաւում։ Գեներալ Բարատիերին կազմել է հետախուզութեան մի բանակ։ Լուր կայ որ իտալիացիներին Հայրրից դուրս քշելու մի փորձ պիտի լինի։

Վերջին բոպէին ստացած հեռագիրները

Կ. Պոլիս 13 Հոկտ. Ծանր խռովութիւններ են տեղի ունեցել Իզմիտի (Նիկոմիդիա) վիճակի զանազան կէտերում, որոնք աղէտալի հետևանքներ են ունեցել, սակայն սպանուածների թիւը յայտնի չէ։

Պետերբուրգ 13 Հոկտ. «Новости» թերթը ասում է որ Անգլեան շատ է անցել հայկական հարցի չափաւոր սահմաններից և որ վտանգ կայ վերակենդանացնելու Եգիպտական հարցը։ Նոյն թերթը յոյս է յայտնում որ Բ. Դուռը պիտի ընդունի պետութիւնների ծանուցագիրը. հակառակ դէպքում Ֆրանսիան և Ռուսիան միջոցներ ձեռք կառնեն արգիլելու, որ Անգլիան պատճառ չը դառնայ կրկնուելու Կ. Պոլսում և այն դեպքերը, որոնք կատարուեցին Ալէքսանդրիայում 1882 թուին։

Արտօնագրեր հրատարակիչ՝
ԱՂԴԻՆԵՍ ԲԻԿՆԱԶԱՐԵԱՆ


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԱՒՐԻԶՈՒՄ „ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ„ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Զեռնատու արժէքներով շնում է ամէն տեսակ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՏԵՐՈՎՔ (գործածած) նմոյշները ուղարկել վերջնական արժէքներով։ Պատուածները յետ կ'դարձնեն. հասցէ։

Société de cabinet de lecture populaire. Tauris.

2—4